

2757

411A C 1926cr294

ՔԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ № 42

ՔԱՂՍ.ՔԱԿԱՆ ՍԵՐԻՍ.

Պոլետարները ըստ յերկրների, միացն'ք

Կար
ՅԵՂ. ՉՈՒԲԱՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՃԽԱՆՈՒԹՅԱՆ
ԶՈՐԱ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾԵՐԻՑ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

9(47)

2-81

ՅԵՐԵՎԱՆ

1924

~~N 676~~ 19411-A C1926-4-29-11

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԵԳԻՏ-ՐԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ № 42

U
Ca2066

ԿՍ.ՂԱ.ԿՍ.ԵԱ.Ն ՍԵՐԻՍ.

24 JAN 2006

9(47)

9-81


Պրոլետարներ ընդդ յերկրների, միացե՛ք

ՅԵՂ. ՉՈՒԲԱՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՃԻՍՆՈՒԹՅԱՆ
ՉՈՐՍ ՏԱՐՎԱ ԳՈՐԾԵՐԻՑ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТРОПОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР



ՅԵՐԵՎԱՆ
1924

18.09.2013

2757

2005 HAL 15



59384.66

Տպագրական տրիտի 2-րդ տպարան. Յերեվան. № 4329.
Տիրաժ 3500.

ԻՆՉԵՐ ԶԵՆ ԱՍՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդ ականջ ու համբերություն պիտի ունենա, վոր լսի, թե ի՞նչ սուտ ու մուտ բաներ չեն ասում Խորհրդային իշխանության մասին: Դաշնակներին վոր լսես՝ Խորհրդային իշխանությունը բռնակալ, արյունխում, խավարամիտ տոկթանների ու ռուսաց թագավորի կառավարությունից վոչընչով լավ չե: Ի հարկե, հի՛ն խոսք ա, մարդ իրա թանին թըթու չի տաի. եղպես ել դաշնակները. նրանց ասելով բոլոր կառավարություններից լավը դաշնակցական կառավարությունն եր. դաշնակների ասելով, հի՛մա ել, հայ գյուղացիներ, դուք յերեսեկ եք տալիս դաշնակցական կառավարության որերին ու աչքներդ ճամբին աղ ու հացով սպասում եք, թե յերբ պետի հեա զան պաշտպան դաշնակցական մինիստրները, խմբապետներն ու լիազորները: Մեր ժողովուրդը մի ուրիշ լավ խոսք ել ունի. ասում ե՛ք վաճ սրտին մխիթարանք: Եղպես սուտ ու մուտ մտքերով թող

միսթարեն դաշնակներն իրանց կոտրած սրտե-
րը: Եղբւոր եղ ա, են ել հուլիս ունի, վոր դա-
րուն կգա-յունջա կուտի. հավը վոր հավ ա, են ել
յերագումը կորեկ ա տեսնում: Եղպես ել դաշ-
նակները:

Մենակ, մի բան ասենք եղ դաշնակներին.
ամիթ չինի հարցնելը, ինչ լավութիւն եք ա-
րել Հայաստանի աշխատավոր ժողովրդին, վոր
եսոր, Խորհրդային իշխանութեան ժամանակ,
ձեր սուտերին հավատացող կամ սպասող աշ-
խատավոր գյուղացի լինի: Են ուրիշ բան եր՝
սրանից մի 4 տարի առաջ. են ժամանակ դաշնակ-
ները հազար իշու բեռ սուտ կարող եյին ասել
և ասում ել եյին Խորհրդային իշխանութեան
ու բալէիկներէ մասին. են ժամանակ ժողովուր-
դից ել մեծ մասը հավատում եր, վորովհետեւ
Խորհրդային իշխանութեան խոսքն ու գործը չեր
տեսել: Իսկ հիմա են խոսքն ել ե ասված, են
գործն ել հո ամեն մեկը կարող ե տեսնել՝ ով
աչք ունի, ով սուտ կույր չի ձևանում: Են դաշ-
նակները, վոր հիմա, 1924 թվականին, հայ գյու-
ղացու անունից Խորհրդային իշխանութեան դեմ
են խոսում, դրանք իսկ վոր Հայաստանի աշխա-
տավոր գյուղացուն հիմարի տեղ են դնում: Թե
ինչքան տակից-զլից հիմար բաներ են խոսում
դաշնակները Խորհրդային իշխանութեան վրա՝ եղ

մասին մի ուրիշ անգամ կըպատմեմ ու մեկիկ-
մեկիկ քամուն կըտամ դաշնակցական պոչավոր
ստերը: Ես գրքում, գյուղացի ընկեր, յես ուզում
եմ քեզ հետ մի անգամ ել ման գալ Հայաստա-
նի դաշտերում ու սարերում, վոր մեկ ել տես-
նենք, թե ինչ գործ ե տեսել Խորհրդային իշ-
խանութիւնը Հայաստանում: Եղ գործը մի ես-
պես փոքր գրքում գրվելու չե. են գրքում խո-
տելու եմ Խորհրդային իշխանութեան են գործե-
րից, վոր քո տեսնութեան հետ են կապված:
Ուրիշ գրքում կխոսենք թե ինչու և ինչպես
Խորհրդային իշխանութիւնը խաղաղութիւն ե
պաշտպանում. մի ուրիշ տեղ ել կխոսենք, թե
ինչու աշխատավոր ժողովրդին դպրոց ու լուսա-
վորութիւն ե հարկավոր և հետն ել ինչ ե արել
ու գեռ ինչ ե անելու Խորհրդային իշխանութիւնը
ժողովրդին մութ աշխարհից լույս աշխարհ հո-
ւեցու համար:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՍԵՐՄԱՅՈՒ

Խորհրդային իշխանութիւնը Հայաստանում
հաստատվեց աշխատավոր ժողովրդին ու վորջ
յերկրին խաղաղութիւն տալու համար: Դաշնակ-
ցականները մի յերկու անգամ փորձեցին խան-
գարել Խորհրդային իշխանութեան այդ նպատա-

կը, բայց քուռ-փոշման զնացին: Մեր յերկրում վերջնական խաղաղություն հաստատվեց են ուրիշ, յերբ կարմիր բանակը գաշնակներին դուքս քշեց: Խորհրդային իշխանությունը աշխատավոր ժողովրդին տվեց են, վոր գաշնակները չկարողացան տալ. գաշնակների որոք անվերջ կոխվ երթե սահմաների վրա, թե յերկրի ներսում ամեն կողմը: Իսկ հիմա, ինչ վոր խորհրդային իշխանություն ե, անցել զնացել են եղ սև ու խառնակ արյունի որերը: Խաղաղություն ե հարեան յերկրների հետ. խաղաղություն ե յերկրի ներսում: Հենց վոր յերկրը խաղաղվեց, Խորհրդային իշխանությունը սկսեց իր ամենամեծ նպատակին ծառայել՝ քանդված — սոված յերկիրը վտարի կանգնացնել, դերեզմանի դուռն ընկած ժողովրդի բերանը շունչ փչել: Սմենից առաջ հարկավոր եր ուտելու հաց ե սերմացու հացնել գյուղացիությանը: 1921 ե 1922 թվականներին խորհրդային իշխանության առաջի դործն եղ եղավ: Ժողովուրդը շարժվեց, սկսեց նորից ցանել, հնձել ու իր հալալ, հանգիստ աշխատանքով ձեռք բերած վատտակի համա առավ: Սկսեց խաղաղ աշխատանքը: Բայց դուք ել գիտեք, կամ ունիստե՞նք ել գիտեն, նոր Հայաստանը հացի յերկիր չե, Հայաստանի հողն ենալեա ե, վոր իր հացով ես

յերկիրը չի կարող կշտանալ: Զնայած դրան Խորհրդային Իշխանությունը ուշք դարձրեց, վոր ժողովուրդն իր հացն ունենա. 1921 թ. ե 1922 թվականներին խորհրդային կառավարությունը 300 հազար փութ սերմացու բաժանեց հողագործ ժողովրդին: 19 թվականին գաշնակցականների ասելով Հայաստանում ցանված ե յեղել 60 հազար դեսյատին, իսկ ես տարի արդեն ցանված ե 250 հազար դեսյատին, այսինքն չորս անգամ ավելի: 21 թվականին փողջ Հայաստանում մոտ 6 միլիոն փութ բերք ստացվեց, իսկ ես տարի 10 միլիոն փութ, այսինքն երկու անգամ ավելի:

Բայց եղբան հացը բավական չի. մոտ 2 միլիոն փութ հաց մենք ստանում ենք Ռուսաստանից:

ՄԵՐ ՀԱՅԸ՝ ՋՈՒՐՆ Ե

Մեր յերկրի հարստությունը բամբակն ե, խաղողն ու այգին ե անասունն ե: Ահա գյուղացու ես շահրհասկանալով, յերկրի ստամորը լավ իմացող կոմունիստները 1922 թվից իրենց ուշքն ու միտքը տալիս են այդեգործությանը, բամբակագործությանն ու անասնապահությանը: Տես-

նենք թե ինչ են արել ետեղ կոմունիստները, ինչ չեն արել ու դեռ ուզում են անել:

Բամբակն ու այգին շուր են ուզում: Դրա համար ել կոմունիստները սկսում են 1922 թվականից ջրի գործը կանոնավորել: Մինչև կոիվը հիմնկվա Հայաստանում 67 հազար գեսյատին հող եր ջրվում գլխավորապես բամբակի ու այգիների համար: Թագավորի սկսած պատերազմի ու վերջըն ել դաշնակների կոիվների պատճառով առուները փչացան, անտերացան. ենպես վոր 1922 թ. արդեն վոչ թե 67 հազար գեսյատին, սկի դրա կեսն ել չեր ջրվում: 1922 թ. խորհրդային իշխանությունը սկսում է յեղած առուները կարգի բերել ու նորերը հանել: 1923 թ. արդեն եգ 67 հազար գեսյատինից միայն 15 հազար գեսյատինը չի ջրվում. մնացած 52 հազար գեսյատինը, ասել է հարուրից ութանասունը (80 պրոցենտը) ջրվում է:

Խորհրդային իշխանության ուժը ու բարձրությունը ես ջրի գործում շատ պայծառ յերևաց: Ո՛վ չի տեսել, թե ինչպես Խորհրդային իշխանությունը Վաղարշապատի ջրանցքը վերջացրեց. քանի-քանի թագավորներ յեկան—գնացին հայ գյուղացու գլխով եդ ջրանցքը կիսաա մնաց. դաշնակներն ել 3 տարվա մեջ վոչինչ չկարողացան անել: Խորհրդային իշխանությունը

կես տարվա մեջ վերջացրեց Վաղարշապատի առուն: Նա ջրում է 2000 գեսյատինի չափ հող:

Հապա Շիրակի ջրանցքը: Սա Վաղարշապատի առվից ել մեծ ու դժվար գործ է: Շիրակի ջրանցքը 2 վերստ ժեռ-քարերի միջով գետնի տակով է անցկացվում, իսկ ամբողջ յերկարությունը 45 վերստ է լինելու: Խորհրդային իշխանությունը վորոշել է ես տարի վերջացնել Շիրակի ջրանցքը յեվ դալիք մայիս ամսին ջուրը բաց թողնել. սա ջրելու է 15 հազար գեսյատին հող, վոր առաջ չեր ջրվում. եդ նոր ջրվելիք հողից մոտ 15—20 հազար մարդ կկերակրվի: Ես տարի Խորհրդային իշխանությունը վերջացրեց Եվլիարի ջրանցքը (Եջմիածնի գավառում), վորը 1500 գեսյատին բամբակի համար հող է ջրում: Ելի ես տարվանից Խորհրդային իշխանությունը սկսելու է Սարգարաբատի վորը ջրանցքը շինել մոտ 800 հազար գեսյատին հող ջրելու համար. Սարգարաբատի դաշտը վորջ վոր ջրվի (50 հազար գեսյատինի չափ), Հայաստանի ամենահարուստ տեղը դա կլինի իհարկե, ես մեծ գործը կամաց-կամաց կկատարվի: Հայաստանի հարուստ, բայց ջուր չլինելու պատճառով անպետքացած տեղերից մեկն ել Արադդայանի հողերն են (Արադդայանը Ղամարվից ներքե գեպի Նախիջևան է): Առաջներում, կռվից առաջ Արադդայանում հողերը մի պամեջ-

չիկի եյին պատկանում. կանոնավոր առու-
ներ կային, բամբակ եր ցանում, բամբակի ու
ձեթի գործարան կար. կռիվների պատճա-
ռով եղ ամենը ավերված ե հիմա. բայց յեթե
փող ճարվի, Խորհրդային իշխանությունը առու-
ները կարգի ե բերելու և մոտ հազար, հազար
հինգ հարյուր դեսյատին բամբակի հողեջրելու:
Մեղրու գավառի գյուղացիների համար ել ես
տարի արգեն կառավարությունը նոր արու ե
փորում, Արագից ջուր հանելու համար:

Ահա են խոշոր առուները, վոր շինել կամ
շինում ե խորհրդային իշխանությունը գյուղա-
ցոց համար: Վճրահղից ե գալիս եղքան փողը.
մեկ մասը տալիս եք դուք գյուղացի ընկերներ,
մեկ մասը ձեզնից վերցրած տուրքերն ու հար-
կերն են. խորհրդային իշխանությունը ձեզնից
վերցրած տուրքերը անիմաստ չի խարջում,
այլ ձեզ ոգտակար գործի մեջ ե դնում, յեր-
կիրը վերաշինում ե. մենակ ձեզնից վերցրած
տուրքերով եղքան գործ չի շինվի: Առուների
վրա ծախսված ու դեռ ծախսելիք փողի մեծ մա-
սը Խորհրդային Հանրապետությունների Միու-
թյան կառավարությունն ե տալիս. մենակ փոք-
րիկ Հայաստանը եղքան ծախս ու եղքան մեծ
գործ չեր կարողանա անել, յեթե նա մյուս Խոր-
հրդային Հանրապետություններից ոգնություն

չստանար: Յեկող 5 տարվա մեջ Խորհրդային
Միությունից մեր կառավարությունը պիտի
ստանա $3^{1/2}$ միլոն փող առուների համար:

ԽՆԱՄԲ ՏԱՐԵՔ ԱՌՈՒՆԵՐԻՆ

Բանը ունենալը չե, ունեցածը պահելն ե:
Ճիշտ խոսք ե սա առուների վրա ասած: Առու-
ները պիտի մաքուր պահել, ամեն գարունք նո-
րոգել, չպիտի քանդել: Մեկ ել պիտի աշխատել,
վոր բոլոր թե վարի, թե վերի գյուղերը կանո-
նավոր ջուր ստանան:

Հայաստանում մինչև 100 հազար դեսյա-
տինի չափ հող կա, վոր ջուր չլինելու պատճա-
ռով գյուղացուն վոչինչ չի տալիս:

Ինչ կարող ե անել խորհրդային իշխանու-
թյունը, անում ե դրա համար, բայց գյուղացիք
ել ավելի պիտի աշխատեն դրա համար: Դրա
համար պետք ե ջրային կոոպերատիվներ կազ-
մել, նախ, նրանք յեղած առուները մաքուր կը
պահեն, ջրից կանոնավոր կոգտվեն, յերկրորդ,
նրանք յեղած անապատները ջրելով, իրենց
լավ հողը կավելացնեն: Ջրանցքներ անցկացնելու
և ճահիճները չորացնելու ծախսերի մեծ մասը
Հ-ի Խորհրդային իշխանությունը և Խորհ. Միու-
թյունն են անում, բայց գյուղացին ել ջրային

կոոպերատիվի միջոցով պետք է իր կարողա-
ցածը անի:

ՋՈՒՐԸ ԲԱՄԲԱԿ Ե ՏԱԼԻՍ, ԲԱՄԲԱԿԸ ՎՈՍԿԻ

Յեթե հիմա բամբակի համար բոլոր հողերը
ընկնեն՝ կարելի է մոտ 50 հազար դեսյատին
բամբակ ցանել ու եղջանից, բամբակի փութը
4—5 բուբլի հաշված՝ 2 ու կեսից մինչև 3 միլ.
տարեկան հունդավոր բամբակ, այսինքն 10—15
միլոն վոսկի բուբլու բերք ստանալ: Սա մեր
փոքրիկ յերկրի այժմյան յեկամուտի ամե-
նամեծ մասը կըկազմի: Գիտեք վոր դաշ-
նակների ժամանակ բամբակը մեռել էր: Խորհր-
դային իշխանության որոք բամբակը հարու-
թյուն առավ ու հիմա արդեն կամաց-կամաց
առաջ է գնում: 1922 թ. գյուղացիք կարողա-
ցան միայն 6 հարյուր դեսյատին բամբակ ցանել:
1923 թ. Խորհրդային Հայաստանում մոտ
4 ու կես հազար դեսյատին բամբակ ցանվեց
ու 220 հազար փութ հնդավոր բամբակ
հավաքվեց: Գյուղացին չեր կարող այդքանը
ցանել, յեթե կառավարութիւնը բամբակործ-
ներին փողով, ցորենով, սերմով, լծկանով
վարկ չտար ու ձեռնտու, հաստատ գնով բամ-
բակի բերքը գյուղացիներին չգնէր: Այս տարի

արդեն կառավարութիւնն ավելի շատ ոգնու-
թյուն բաժանեց բամբակագործ գյուղացինե-
րին. ես տարի Հայաստանում մոտ 15 հա-
զար դեսյատին բամբակ ցանվեց: Եղջանից
մոտ 700—800 հազար փութ հնդավոր բամբակ
պիտի ստացվեր: Բայց արի տես, վոր հիվան-
դութիւնը բամբակի մի փոքր մասը բոլորո-
վին փչացրեց, իսկ մի մասի ել բերքը պակաս
ստացվեց: Բայց ելի 600.000 փթի չափ կստացվի,
վոր տալիս է գյուղացուն 2 ու կես միլոն ուրբ-
լուց ավելի գումար:

Այս տարի բամբակին պատահած այս փոր-
ձանքը մեզ լավ դաս կլինի, վոր յեկող տարի
ավելի լավ մշակենք բամբակը, ժամանակին հի-
վանդութիւնները վռնչացնենք*): Հիվանդու-
թյուն չեղած տարին Արարատյան դաշտում բամ-
բակի դեսյատինը մոտ 50 փութ բամբակ է տա-
լիս. դաքիչ է. կարելի է ավելի շատ բերք վերցնել,
յեթե միայն բամբակն ավելի լավ մշակենք, յեթե
վոր գիտության ու մեզնից ավելի վարձված
բամբակագործների որինակով շարժվենք: Հեռուն
չգնանք. հենց մեր Հայաստանում Մեղրու գա-
վառում բամբակագործ գյուղացիք դեսյատինից
130 մինչև 150 փութ հնդավոր բամբակ են
ստանում:

*) Կարդացեք «Բամբակի մշակութիւն» գիրքը

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Դաշնակցականների ժամանակ այգեգործությունն ու գինեգործությունը մեռածի պես եյին: 1922 թվականին Հայաստանի այգիները մի քանի հարյուր հազար ուռբուռ բերք տվին: 1923 թ. լավ յեղանակների պատճառով բերքն ավելի շատ եր ու միլիոն ու կես ուռբուռց ավելի եր հաշվում: Բայց հիմա ել մեր այգեգործությունն ու գինեգործությունը յերկու հիվանդություն ունեն. առաջինը՝ վոր այգիները պապենական ձևերով են մշակվում ու մեկ ել՝ վնասատուներ ու հիվանդություններ շատ կան մեր վագերի ու պտղատու ծառերի վրա: Այս տարվանից Խորհրդային իշխանությունն առաջվանից ել ավել ուշադրություն պիտի դարձնի ես արևմտության վրա ու պիտի ոգնի գյուղացիներին: Մեր այգեգործության ու գինեգործության յերկրորդ հիվանդությունն այն ե, վոր խաղողն ու գինին գին չունեն, իսկ գին չունեն, վորովհետև շուկան վոքր ե: Խորհրդային իշխանությունը գիտե այդ բանը և դրա համար ել վճիռ ունի հանած, վոր այս տարի վարկ տայ այգեգործ գյուղացիներին նրանց խաղողի գիմացը ու եդ խաղողը գնե, Յերևանի «Արարատ» գործարանում գինի, արաղ, կոնյակ, սպիրտ

պատրաստե ու յերկրից դուրս ծախել. հետո Խորհրդային կառավարությունը վորոշել ե հնարավորություն տալ գինեգործ գյուղացիներին իրենց գինին ու սպիրտը յերկրից դուրս հանել ու ծախել, աշխատել, վոր գինու ակցիզը ամբողջ Խորհրդային Միության մեջ պակասեցվի: Ահա այսպիսի վորոշումներ ունի Խորհրդային իշխանությունը այգեգործությունն ու գինեգործությունը վոտքի կանգնացնելու, զարգացնելու համար: Հայաստանի գինին արգեն լավ ծախվում ե Ռուսաստանում, մանավանդ Մոսկվայում և հույս կա, վոր նա շուտով կսկսե հարստացնել այգեգործներին:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հիմա մեր յերկրի հարստության յերրորդ աղբյուրը անասնապահությունն ե: Մինչև այս տարի Խորհրդային իշխանությունը ուշադրություն ե դարձրել ու ոգնել ե բամբակագործներին ու այգեգործներին: Այս տարվանից պիտի ոգնել նմանապես անասնապահությանը: Արոտատեղներ մենք շատ ունենք, մի քիչ պակաս քան Յեվրոպայի Շվեյցարիա անունով յերկիրը, բայց արի տես, վոր այդ Շվեյցարիան անասնապահությունից 60 միլիոն ուռբուռ ար-

դյուանք եւ ստանում, իսկ մենք շատ-շատ մի քանի միլիոն ուրբի: Իսկ յեթե մեր սարի գյուղացիները ենթան անասուն ունենան, վոր բոլոր արտատելիներում արածացնեն, անասունների ցեղն ազնվացնեն, լավ կերակրեն, տավարը լավ պահեն, յեթե մեքենաներով յուզ ու պանիր պատրաստեն ու կառավարությունն էլ հնարավորություն տա եզ յուզն ու կարագը, բուրգն ու կաշին գյուղացուց ձեռքնուռ գնով առնել ու ծախել՝ են ժամանակ մեր յերկրի անասնապահությունը քչից 40 միլիոն ուրբի տարեկան արդյունք կտա եւ մեր հարստության ամենաառաջին աղբյուրը կդառնա: Անցած յերկու տարիներում Խորհրդային իշխանությունը անասնապահության համար մի քան եր անում. տավարի հիվանդությունների դեմ եր կռվում: Մեր անասունների թիվը շատանում ե. 1919 թվին մեր գյուղացիությունը ուներ մոտ 148 հազար խոշոր անասուն. ես տարի արդեն ունենք 350 հազար գլուխ: 1919 թ. մանր անասուններ ունեյինք 350 հազար գլուխ, իսկ ես տարի — 600 հազար գլուխ:

Այս տարվանից արդեն Խորհրդային իշխանությունը վորոշել ե՝ անասնապահական շրջաններում մի քանի անասնաբուժարաններ, գուգակայաններ (случные пункты, տա-

վարի գավոդներ) բաց անել, ասել ե լավ բուգաներ պահել, տեղական տավարի ամենալավ ցեղերն ազնվացնելու համար. ես մեկ. յերկրորդը՝ Խորհրդային իշխանությունը վորոշել ե ոգնել գյուղացիներին, վոր նրանք կաթնատնտեսական արտելներ, բնկերություններ կազմակերպեն, յուզ ու պանիր պատրաստելու գործարաններ ունենան՝ ամենալավ ձևով կաթնամթերքներ ստանալու համար. յերրորդ՝ Խորհրդային իշխանությունը վորոշել ե՝ մի քանի տեղերում ցույց տալ, թե ինչով ու ինչպես պիտի կերակրել անասուններին, լավ ու շատ միս, լավ ու շատ կաթնեղեն ստանալու համար:

Դաշնակների վրա խոսք բաց անել չեյի ուզում, բայց վոր տեղն յեկավ պիտի ասեմ: Ոգորմած հողի դաշնակցական կառավարությունը աչքը հեռուն անկած՝ իր քթի տակի հարստությունը փչացնում եր. Խորհրդային իշխանությունը հակառակն ե անում. Խորհրդային իշխանությունը ասում ե գյուղացիներին — ապա յեկեք մեր ես ունեցած հողից ինչ վոր կարող ե նա տալ, ինչ վոր կարող ենք հանել՝ հանենք, ոխալ սարի քամակում յեղածի հետեից չընկնենք: Հիմիկիա Խորհրդային Հայաստանի հողը շատ չե: Բայց յեկեք գոնե ետքանը կարգին մշակենք: Դուք տեսաք, վոր անշուր հողը ջրելով



բամբակ-փոսկի դարձրինք. իսկ հլա ինչքան հող
կա ջրելու, վոր են ել փոսկի դառնա. ինչքան
ճահիճ կա չորացնելու, վոր պետքական հող
դառնա, իսկ սարի արոտատեղիները, վոր մինչև
հիմա զուր տեղը կորել են. սարում գյուղացիք
գարի յեն ցանում, վոր զուր աշխատանք է. իսկ
յեթե սարում բազուկ, կարտոֆիլ, տեսակ-տե-
սակ խոտեր ցանվեն՝ ինչքան ոգուտ կստացվի՝
են բազուկով, են խոտերով տավարը կերակրե-
լուց: Բանը շատ հող ունենալը չէ, բանը հողը
կարգին, մշակելն է, ամեն հող իր պտուղն ունի.
պետք է ճանաչել հողի տամարը և հողից վերցնել
այն ամենը, վոր նա կարող է տալ: Իսկ գրա-
համար գիտություն է հարկավոր: Եզ գիտու-
թյունն էլ գյուղացուն տվողը էլի Խորհրդային
ԽՍՀ-ի խոտերն են:

Խորհրդային ԽՍՀ-ի խոտերն են ամենամեծ
գործերից մեկն էլ են յեղավ, վոր ժողովրդի
ձեռքը իսկական փող տվեց: Հիմա արդեն փողը
գին ունի, հաստատ գին, ենպես վոր մարդ կա-
րող է հանգիստ սրտով քաղաքում բան ծախել
ու առնել: Հիմա յերբ քեզ ոգուտ է՝ են վախան
եւ տար ցորենդ, կաթնեղենդ և ուրիշ սպրանքդ
ծախիր. ուզում ես ետը գնիր ինչ վոր քեզ
պետք է, չես ուզում, փողը մոտդ պահիր, ա-
ռանց վախենալու, վոր մի ժամից փողի գինը

կընգնի: Յեթե են նոր փողը չենք՝ գյուղացու-
հրությունը չեր լավանա: Հիմա հարկն էլ կա-
րող ես փողով տալ, կառավարությունից էլ
կարող ես փողով վարկ ստանալ և ուղածդ դնել.
ինչ վոր տնտեսությանդ պետք է:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ՊԵՏԻ Ե

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈԳՆՈՒՄ Ե ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻՆ

Ես չորս տարի Խորհրդային ԽՍՀ-ի խոտերն
արևով գյուղացու տնտեսությունը՝ կամաց-
կամաց վրա է գալիս, առողջանում ե: Են վոր
յերեք տարի առաջ եր, չար յերազի պես ան-
յամվ դնաց, բայց ով է են միամիտը, վոր առի-
թե մեր գյուղացիք բոլորը վտավ-գլխով բախ-
տավոր են:

Աշխատավոր գյուղացին, չքավոր գյուղա-
ցին դեռ շատ կարիքներ ունի. դեռ շատ նեղու-
թյուններ է քաշում դուքանչու, համիա-գորբա-
յի, կուլակի ձեռքից: Հասարակ որինակով,
խոսքի վրա ասենք. դուքանչին թալանում է

աշխատավոր գյուղացուն չիթ, սապոն, սաեզ, աղ, նավթ, մեխ ծախելիս, հարուստ գյուղացին թալանում է աշխատավոր գյուղացուն վաքի համար լծկան, գութան կամ սերմ տալիս. հարուստը թալանում է աշխատավորին փող փոխ տալիս՝ անաստված շահ առնելով: Ել վորն ասեմ. աշխատավոր ու չքավոր գյուղացին ինքը ինձնից ել լավ գիտի իր քաշած նեղությունները:

Բայց շատ քիչ են են աշխատավոր գյուղացիները, վոր եզ նեղություններից ազատվելու հնարն իմանան: Աշխատավոր ու չքավոր գյուղացիներ, լավ իմացեք ես մի բանը. յեթե ուզում եք համ ձեր գործերը լավացնել համ ել հարսանների ճանկից ազատվել՝ կոոպերացիայի ձամբեն բռնեք ու եզ ձամբով գնացեք:

Կոոպերացիա ոտար խոսք է, բայց աշխատավոր գյուղացու համար ել շատ ոգտակար, պետքական է, սսին ել է ոգտակար, թուրքին ել: Կոոպերացիա հայերեն ասել է միասին գործ անել, բնկերովի աշխատել: Յեթե մի գյուղում 20—30 տուն հավաքվում են մի գործ անելու համար բնկերություն են կազմում՝ եզ է, վոր կոոպերացիա են ասում: Են ինչ մի տան ուժից վեր է, 20—30 տունը միշտ ել գլուխ կբերեն: Տեսակ-ատակ կոոպերացիա կա, բոլորն ել ջուկ-ջուկ նպատակով, բայց բոլորն ել գյուղացու հա-

մար ոգտակար են. բնկերություն, կոոպերացիա կա, վոր նպատակ ունի եժան ու լավ ապրանք առնել. դուքանչին կաշվեց է գուրս դալիս, վոր գյուղացու շինքին համ վատ ապրանք կապի, համ ել եզ գյուղացու բուրդը խուզի, ապրանքը թանգ ծախի, փող աշխատի. իսկ յեթե մի 20—30 տուն հավաքվեն, իրենց փողը (կապիտալը) միացնեն ու քաղաքի կոոպերատիվից ապրանք բերեն՝ համ իրենց ուզած լավը կբերեն, համ ել շահի, վաստակի հետևից չեն ընկնի. հո ապրանքն իրենց համար է. իրենք իրենց հո չեն թալանելու: Կոոպերացիայի մի ուրիշ տեսակն ել կա. իրենց ապրանքը, ասենք յուղը, պանիրը, խաղողը, գինին, դռաբը լավ ծախելու համար գյուղացիք հավաքում են մի տեղ եզ բոլորը և եզպես միասին բազար են հանում, վորտեղ վոր լավ գին են տալիս, ենտեզ ել ծախում են: Կոոպերացիայի յերրորդ տեսակն ել կա. ասենք, որինակ հենց եզ յուղ ու պանիր ծախողներն ուզում են լավ յուղ ու պանիրը քաղաքում ծախել. քաղաքում մաշինով պատրաստած յուղն ու պանիրն են սիրում ու լավ գին տալիս, բայց արի, տես վոր ամեն մի կովատեր կամ փոխարատեր ենքան փող չունի. վոր մաշին առնի, յուղ ու պանրի զավոգ սարքի. բայց ելի մի 20—30 գյուղացի եզ զավոդը կա-

րող են սարքել և ոգուտ ունենալ: Նույն բանը
կարելի է ասել և բուրդ գցելու համար կազ-
մըվող կոոպերատիվների մասին:

Այդեգործ գյուղացիներն ել կոոպերացիայի
կարիք ունեն. նրանք միացած ուժով կարող են
գանազան ճարեր (քուքուրթ) ու գործիքներ
առնել ու բանեցնել այգիները բժշկելու համար:
Կոոպերացիան կարող է լծկան, սերմ, վարող,
ցանոդ, կալսոդ, մաքրող մեքենաներ առնել ելի
ընկերական փողով:

Մի խոսքով, վոր կողմ ուզում եք նայեք,
կարող եք տեսնել ու հասկանալ, վոր ուժը մի-
ության մեջ է, վայ մենակ մնացած աշխատա-
վոր ու չքավոր գյուղացուն:

Խորհրդային իշխանությունը շատ լավ է
հասկանում կոոպերացիայի ոգուտը աշխատա-
վոր գյուղացիության համար: Խորհրդային իշ-
խանությունը այս տարվանից մի Բանկ է բացել,
եղ բանկին 750 հազար ռուբլի վսկի փող է
տվել, վոր եղ Բանկը գյուղացու տնտեսությանն
օգնի, դրա համար ել Բանկը Գյուղատնտեսա-
կան անուն ունի: Գյուղատնտեսական Բանկը
եղ փողը փոխ է տալու գյուղատնտեսական
կոոպերատիվներին. յեթե գյուղացիք ուզում են
կառավարությունից օգնություն ստանալ՝ նրանք

գյուղատնտեսական ընկերություններ, — Կոոպե-
րացիա պիտի կազմեն իրենց գյուղերում:

Շատրվա որից ել լավ որի հասնելու համար,
Կոոպերացիայի ճամբեն բռնենք ու եզ ճամբով
ել գնանք:


* * *

Են գլխից ասեցի, վոր ես փոքր զրքում հնար
չկա պատմելու են բոլոր գործերը, վոր արել է
Խորհրդային իշխանությունը: Դեռ ենքան գործ
կա անելու թե կառավարության ուժերով, թե
ձեր սեփական ուժերով գյուղացի ընկերներ:
Են վոր Խորհրդային կառավարությունը ես
չորս նեզ ու ազքատ տարիներին արել է՝ զա
դեռ մեծ գործի սկիզբն է: Տարեց-տարի ուժե-
ղանում է Խորհրդային Հանրապետությունների
Միությունը. տարեց-տարի ավելի մեծ գործեր
կանի Խորհրդային իշխանությունը: Միայն հար-
կավոր է ամուր ու հավատարիմ պաշտպան
կանգնել եղ բանվորա — գյուղացիական կառավա-
րությանը: Մեկ ել հարկավոր է, վոր գյուղա-
ցիք ամեն բան կառավարությունից չսպասեն:

Խորհրդային իշխանության որոք գյուղա-
ցիությունը կարող է այնպիսի ուժեղ կազմա-
կերպություն ստեղծել, ինչպիսին կոոպերացիան
է: Կոոպերացիայի մեջ միացրեք աշխատավոր

գյուղացիներ ձեր ուժերը, և գուր աշխարհի
հաղթություններ կունենաք, վոր ինքներդ ել
կզարմանաք, աշխարհին ել կզարմացնեք: Կո-
ռպերացիան կոզնե վոչ միայն ձեր անանապա-
հությանը, այգեգործությանը, բամբակագործու-
թյանը, յերկրագործությանը, այլև մեղվաբու-
ծությանը, գորգագործությանը, և նման գոր-
ծերին. վերջապես կոպերացիան ձեզ կազատի
վաշխառուի և խանութպանի ունից:

Ձեր ինքնագործունեությամբ և մեր խոր-
հրդային իշխանության ոգնությամբ մեր առջև
յերկիրը վտաքի և կանգնում և հարստանում:



ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

